

Արշալույս Տեսչյան

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԶԵՐՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԻՔԵԶԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵԴՃԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քանալի բառեր- պատմագիտություն, կեղծարարություն, պատմության դասավանդում, Եվրոպայի խորհուրդ, բազմատեսանկյուն մոտեցում, եվրոպական ուղղություն:

Եվրոպայի խորհուրդը (ԵԽ) իր գործունեության ընթացքում կարևոր տեղ է հատկացնում ԵԽ անդամ-պետություններում պատմագիտության և պատմության դասավանդման հիմնահարցերին: ԵԽ-ի տարբեր կառույցների՝ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽՆՎ), Նախարարների կոմիտեի, Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի կողմից ընդունվել են պատմագիտության, պատմության դասավանդման հիմնահարցերին նվիրված բազմաբնույթ փաստաթղթեր՝ բանաձևեր, հանձնարարականներ, զեկույցներ, որոնք պետք է նպաստեին ԵԽ անդամ-պետություններում հանդուրժողականության, փոխադարձ վստահության մթնոլորտի հաստատմանը¹:

Կանխակալ մոտեցումներից ու նախապաշարմունքներից զերծ պատմության դասագրքեր, ուսումնական ծրագրեր մշակելու, պատմության դասավանդման ոլորտում միասնական սկզբունքներ ներդնելու և այս ոլորտին առնչվող խնդրահարույց այլ իրողություններ վերհանելու, քննարկելու և դրանց լուծման ուղիներ փնտրելու նպատակով ԵԽ նախաձեռնությամբ տեղի ունեցան մի շարք գիտաժողովներ, հանդիպումներ, կոնֆերանսներ Հելսինգորում (1965 թ.), Բրաունշվեյգում (1969 թ.), Ստրասբուրգում (1971 թ.), Լիսաբոնում (1983 թ.) և եվրոպական այլ քաղաքներում²:

Վերոնշյալ հիմնահարցերն առավել սուր դրսևորվեցին 1980-ական թթ. վերջին և 1990-ական թթ. սկզբին, երբ ԵԽ-ին անդամակցեցին Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի, այնուհետև նախկին ԽՍՀՄ երկրները՝ կոմունիստական անցյալից ժառանգություն մնացած քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային խնդիրներով, խորհրդային վարչակարգի կողմից կատարված կամայական ու անարդար սահմանաբաժանումներով, տարածքային հարցերով³: Գորբաչովյան «վերակառուցման», «իրապարակայնության» կարգախոսները խթանեցին ԽՍՀՄ հանրապետություններում ազգային պատմության, կոմունիստական իշխանությունների կողմից միտումնավոր մոռացության մատնված կամ խեղաթյուրված ու արժեզրկված Տսպիտակ էջերի՝ ուսումնասիրությունը: Քաղաքական և գաղափարական կապանքներից ձերբազատված ազգային պատմության ուսումնասիրությունը և վերաշարադրումը դարձան հրատապ անհրաժեշտություն:

Պետք է նշել, որ նախկին խորհրդային հանրապետություններում պատմության վերանայման և վերաշարադրման գործընթացում առաջ եկած հակախորհրդային տրամադրությունները հետագայում վերափոխվեցին հակառուսական դիրքորոշումների, ինչը բարդացրեց այս երկրների և Ռուսաստանի Դաշնության միջև առանց այդ էլ

¹St' u Resolution (64) 11 (Adopted by the Ministers' Deputies on 6th October 1964) Civics and European Education <https://rm.coe.int/16804f8b7c>

Recommendation 1283 (1996)1 History and the learning of history in Europe <http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-DocDetails-EN.asp?FileID=15317&lang=EN>

Recommendation Rec (2001)15 of the Committee of Ministers to member states on history teaching in twenty-first-century Europe https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805e2c31

²St' u «Against bias and prejudice. The Council of Europe's work on history teaching and history textbooks», Strasbourg, 1995, p. 5:

³1990-ական թթ. ԵԽ-ին անդամակցեցին Հունգարիան, Լեհաստանը, Բուլղարիան, Էստոնիան, Լիտվան, Լատվիան, Սլովենիան, Չեխան, Սլովակիան, Ռումինիան, Ալբանիան, Մոլդովիան, Ռուսաստանը, Ուկրաինան, Մակեդոնիան, Խորվաթիան: Վրաստանը ԵԽ անդամ դարձավ 1999 թ., իսկ Հայաստանն ու Ադրբեյջանը՝ 2001 թ.:

բարդ հարաբերությունները: Հակառուսական տրամադրությունների ազդեցությամբ ընդհանրապես բացառվում և արժեզրկվում էին խորհրդային ժամանակաշրջանում տեղ գտած դրական ձեռքբերումները և իրողությունները: Օրինակ, Կրաստանում Ջ. Գամսախուրդիայի նախագահության տարիներին Գերագույն խորհուրդը, նշելով պետական նոր տոները, բացառում էր ոչ միայն նոյեմբերի 7-ը, այլև մայիսի 9-ը, ինչը չունեցավ հասարակության կողմից որևէ բացասական արձագանք¹: Մոլդովայում պատմագիտական միտքը, մեծ ուշադրություն հատկացնելով ռուս-մոլդովական հարաբերություններին, հավասարության նշան էր դնում Թուրքիայի և Ռուսաստանի միջև՝ ժխտելով և անտեսելով Բալկաններում Ռուսաստանի խաղացած օբյեկտիվ դերը, լուսթյան մատնելով Քյուչուկ-Կայնարջի, Յասիի և Ադրիանապոլսի պայմանագրերի նշանակությունը Ղանուբյան իշխանությունների համար²:

Վերոնշյալ խնդիրներն օրեցօր ավելանում, բարդանում ու խճճվում էին՝ ամենևին էլ ոչ երկրորդական դեր խաղալով ԽՍՀՄ նախկին երկրներում հակասությունների խորացման և փոխադարձ անվստահության, ավելին՝ թշնամական մթնոլորտի ձևավորման գործում: Արևելյան Եվրոպայի նախկին կոմունիստական երկրներում 1990-ական թթ. սկզբին հրապարակայնորեն քննարկվում էր ոչ թե ապագան, այլ անցյալը, ինչպես օրինակ՝ Հարավսլավիայի տարածքում, որտեղ պատմության շուրջ պատերազմը դարձել էր իրական պատերազմի կարևոր մաս³: Այս միտքը կարելի է նաև մեջբերել նախկին խորհրդային պետություններում տիրող իրադրությունը նկարագրելու համար:

Պետք է նշել, որ այս խնդիրներին վերաբերող առաջին համաեվրոպական հանդիպումը արևելաեվրոպական երկրների մասնակցությամբ տեղի ունեցավ Բելգիայի Բրյուզե քաղաքում 1991 թ. դեկտեմբերին: Քննարկումների ընթացքում մասնակիցների կողմից առաջ քաշվեց պատմության դասավանդման վերաբերյալ եվրոպական խարտիա մշակելու գաղափարը: Ընդգծվեցին մի շարք սկզբունքներ՝ մարդու իրավունքներ, հանդուրժողականություն, բազմակարծություն, որոնք պետք է հաշվի առնվեին դասագրքերի հեղինակների կողմից՝ անկանխակալ և առանց նախապաշարմունքների պատմության շարադրման համար: Այս սկզբունքները ամրագրվեցին առանձին գրքույկում, որը պետք է իր աջակցությունը բերեր 1994 թ. դեկտեմբերին ԵՄ-ի կողմից մեկնարկած ռասիզմի, քսենոֆոբիայի, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական երիտասարդական արշավին (European Youth campaign against Racism, Xenophobia, Antisemitism and Intolerance)⁴:

ԵՄ-ի կողմից 1997-2014 թթ. իրականացվեցին պատմության դասավանդման ոլորտում մի շարք կարևոր նախաձեռնություններ, որոնցից էին Եվրոպայի պատմության դասավանդումն ու ուսումնասիրումը 20-րդ դարում 1997-2001 թթ. (Learning and teaching about the history of Europe of the 20th century), Եվրոպական ուղղությունը պատմության դասավանդման շրջանակներում 2002-2006 թթ. (European Dimension in History Teaching), Ուրիշի (օտարի) կերպարը պատմության դասավանդման համատեքստում 2006-2009 թթ. (The Image of the Other in History Teaching), Համընդհանուր պատմություններ Եվրոպայի համար՝ առանց բաժանարար գծերի 2010-2014 թթ. (Shared histories for a Europe without dividing lines)⁵: Իհարկե, այս նախաձեռնություններից յուրաքանչյուրը կյանքի էր կոչվել հստակ նպատակներով. ԵՄ անդամ պետություններում սահմանել պատմության դասավանդման ոլորտում համաձայն չափանիշներ, հաղթահարել կանխակալ և նախապաշարված մոտեցումների,

¹ St' u Anchabadze Yu., Национальная история в Грузии: мифы, идеология, наука, Национальные истории в советском и постсоветских государствах, М., 2003, с. 162:

² St' u Blagodatikh I., Молдова и Приднестровье в поисках <своей> истории, Национальные истории в советском и постсоветских государствах, М., 2003, с. 198:

³ St' u Vodopivec P., When violence of the past becomes a topical issue of history, The 20th century – an interplay of views, Council of Europe Publishing, 2002, p. 60:

⁴ St' u Against bias and prejudice, p. 7-8:

⁵ St' u The 20th century – an interplay of views, Council of Europe, 2002, Crossroads of European histories, Multiple outlooks on five key moments in the history of Europe, Council of Europe, 2006, Shared histories for a Europe without dividing lines, Council of Europe, 2014:

հակազիտական սկզբունքների կիրառումը, բացառել անվստահության և թշնամանքի սերմանումն ու տարածումը:

Այժմ վերոնշյալ նախաձեռնությունների համատեքստում անդրադառնանք 2001 թ. հունվարից ԵՍ անդամ պետություն հանդիսացող Ադրբեջանում պատմագիտության, ինչպես նաև պատմության դասավանդման գործընթացում տեղ գտած կեղծարարության դրսևորումներին:

Գաղտնիք չէ, որ ադրբեջանական պատմագիտությունը պատմական փաստերը խեղաթյուրելու, վերջիններս քաղաքական պահանջներին համապատասխան աղձատելու բավական լուրջ փորձառություն ունի, որը հիմնվում է թուրք պատմաբանների կողմից մշակված հակազիտական սկզբունքների վրա: Հայտնի է, թե ինչպիսի եռանդով թուրքական պատմագիտության մեծաթիվ ներկայացուցիչներ, ինչպիսիք են Շ. Գյունալթայը, Զ. Տոգանը, Ֆ. Կիրգիօղլուն, Ա. Էնգինը, Է. Ուրասը, Զ. Օզկայան, Է. Աֆիֆը, Զ. Անադոլը և ուրիշներ, փորձում էին թուրքիայի տարածքում գտնվող հնագույն քաղաքակրթությունները սեփականացնել, թուրքական ծագում վերագրել ուրարտացիներին, խուրհներին, խեթերին, սկյութներին, էլամցիներին, քրդերին և այլն¹: Թուրք պատմաբանների կողմից յուրացվում էին հայկական, ինչպես նաև Օսմանյան կայսրության տարածքում ապրող տարբեր ժողովուրդների մշակույթի նմուշները: Նույնիսկ քրիստոնեական եկեղեցիներում վարագույրների ու այլ կերպասների վրա եղած զարդարանքները համարվում էին «թուրք» վարպետների աշխատանքներ²:

Այս գործընթացը շատ լավ է ներկայացնում Կոստան Զարյանն իր «Սպանիա» աշխատությունում՝ նշելով, որ սա ուրացման բացառիկ ու եզակի երևույթ է պատմության մեջ՝ արտացոլված «մենք մենք չենք» խոսքերում: «Նրանք ասում են՝ մենք եկվորներ չենք, օտարներ չենք, այլ բնիկներ ենք, սկզբից ի վեր այստեղ ծնված, այստեղ մեծացած և մշակույթ ստեղծած: Երե՞կը, անցյա՞լը, - մենք այն չենք: Մենք՝ մենք չենք: Ու փոխում են իրենց զգեստերը, փոխում են իրենց անունները, ձգնում են փոխել մտածելու և զգալու իրենց կերպը»³: Այս կերպ թուրք, այնուհետև ադրբեջանցի պատմաբանները, կեղծելով, խեղաթյուրելով սեփական պատմությունը, յուրացնելով ուրիշների մշակութային ժառանգությունը, առաջին հերթին շարժվում են՝ սեփական ինքնությունը մերժելու ճանապարհով:

Վերադառնալով ադրբեջանական պատմագիտության արդի խեղաթյուրումներին և զեղծարարություններին՝ դժվար չէ նկատել թուրքական պատմագիտությանը բնորոշ ձեռագիրը: Դեռևս խորհրդային տարիներին Ադրբեջանում ի հայտ եկավ կեղծաղվանագիտական ուղղություն, որն ամեն գնով փորձում էր աղվաններին ներկայացնել որպես ադրբեջանցիների նախնիներ: Այս գործընթացն ուղեկցվում էր գիտական սկզբունքների ու չափանիշների կոպիտ ոտնահարմամբ, հայոց պատմության խեղաթյուրմամբ, հայկական մշակութային կողոթողների յուրացումամբ ու սեփականաշնորհմամբ: Կեղծաղվանագիտական այս ուղղության ներկայացուցիչներ Զ.Բունիաթովը, Ֆ. Մամեդովան իրենց աշխատություններում հայ միջնադարյան գրականության նշանավոր կոթողները՝ Դավթակ Քերթոզի, Մխիթար Գոշի, Մովսես Կաղանկատվացու, Կիրակոս Գանձակեցու աշխատությունները ներկայացնում էին որպես աղվանական գրականության նմուշներ, որոնց բնօրինակներն իբրև արաբական տիրապետության շրջանում ոչնչացվել էին հայերի կողմից, և պահպանվել էին միայն հայկական թարգմանությունները⁴: Հայ գրականության կոթողների կողոպուտը կատարվում էր առանց պատմաբանասիրական, տեքստաբանական քննության, հետազոտության և քիչ թե շատ հիմնավոր փաստարկների⁵:

¹ Տե՛ս Զուլայան Մ., Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ (հին և միջին դարեր), Ե., 1995, էջ 32:

² Նույնը՝ էջ 158:

³ Տե՛ս Զարյան Կ., Սպանիա, Եր. 1998, էջ 78:

⁴ Տե՛ս Мушегян А. В., Псевдоалбанская литература и ее апологеты, Вестник общественных наук, N 8, 1989, с. 17:

⁵ Նույն տեղում:

Հետաքրքիր է, որ հայկական հետքը՝ մշակույթն ու պատմությունը մերժելուն, բացառելուն ուղղված այս տրամադրությունները փոխանցվում էին նաև ադրբեջանական հասարակությանը, ինչի մասին վկայում է հուշարձանագետ Ս. Կարապետյանի «Հյուսիսային Արցախ» գրքում բերված մի դրվագ, որը տեղի էր ունեցել Գետաբեկի շրջանի Ռուստամ Ալին գյուղում 1982 թ., երբ գյուղի թշնամաբար տրամադրված բնակիչներից մեկը պնդում էր, որ տեղի հայկական եկեղեցիները հունական են, որոնք կառուցել են այստեղ նախկինում ապրած հույները¹:

Ադրբեջանում պատմության խեղաթյուրման գործընթացը, բնականաբար, ավելի մեծ թափ ստացավ 1988 թ. Արցախյան պահանջատիրության վճռորոշ փուլի սկզբնավորման օրերին: Արբեջանցի պատմաբաններն ու Ադրբեջանի պատմության վերաբերյալ նորօրյա տեսությունների տարբեր մասնագիտությունների տեր հեղինակները խուսափում էին գիտական լուրջ բանավեճերի, քննարկումների մասնակցելուց, որոնց ընթացքում, բնականաբար, փաստագուրկ և հիմնագուրկ այդ տեսությունները կոչնչանային, այլ նախընտրում էին հանդես գալ թերթերում, ամսագրերում և բորբոքել հասարակության առանց այն էլ բորբոքված կրթերը Արցախյան հիմնահարցի շուրջ:

Հայաստանի գիտությունների ակադեմիայի հանձնարարությամբ մի խումբ գիտնականներ տպագրության պատրաստեցին «Լեռնային Ղարաբաղ. պատմական տեղեկանք» գրքույկը՝ հիմնված բացարձակապես հավաստի սկզբնաղբյուրների վրա, որը 1988 թ. հուլիսին լույս տեսավ 45 հազար օրինակով²: Թվում էր, թե ադրբեջանցի պատմաբանները հանդես կգան գրախոսությամբ և գիտականորեն կհակադարձեն այստեղ ներկայացված տեսակետներին: Սակայն, մեկ տարի անց ադրբեջանցի պատմաբանները տպագրում էին Լեռնային Ղարաբաղի խնդրի վերաբերյալ մեծ քանակությամբ պատմական փաստերը խեղաթյուրող հոդվածներ, որոնք ավելի շուտ նպատակ ունեին անորոշության, շփոթության մեջ գցել ժողովրդին, քան օբյկտիվ լուսաբանել հարցը³:

Մեծամասամբ այս «հայտնագործությունները» ունեն ներքին սպառման գործառույթ՝ հետապնդելով սեփական հասարակությանը ապատեղեկացնելու, հրահրելու և հակահայկական տրամադրություններ ձևավորելու նպատակներ: Միջազգային հանրությանը, առավել ևս գիտական շրջանակներին լավ հայտնի են թուրքական ծագումնաբանության, պատմության և քաղաքակրթության հիմնահարցերը:

Թոմաս դը Վալը «Սև այգի» գրքում ներկայացնում է իր հանդիպումը Ֆ. Մամեդովայի հետ, որը փորձում էր աղվանական տեսության օգնությամբ հայերին Կովկասից ընդհանրապես դուրս մղել, «բոլոր հողերը, եկեղեցիները, վանքերը, համարում էր ալբանական, նույնիսկ Էջմիածինն, ըստ նրա, մինչև 15-րդ դարն ալբանական էր⁴: Հայ իշխան Հասան-Ջալալի ծագումնաբանության և աղվանական պատմության վերաբերյալ իրեն մտահոգող հարցերի պատասխանները Թոմաս դե Վալն ստացել էր Նյու Ջերսիի Ռոհան քոլեջի պրոֆեսոր Ռոբերտ Հյուսենից⁵: Սա խոսում փաստ է այն մասին, որ ադրբեջանական պատմագրության կողմից մտածված ու պատրաստված ցանկացած հերյուրանք ու կեղծիք կարելի է գիտականորեն հերքել ու բացահայտել:

Սակայն, ադրբեջանական պատմագրության նկատմամբ միջազգային կարծիքն ու վստահության խնդիրը շատ չի մտահոգում այս երկրի ղեկավարությանը: 2005 թ. դեկտեմբերին Ելույթ ունենալով Ադրբեջանի ԳԱԱ 60-ամյակի նիստում նախագահ Իլհամ Ալիևը խոստացավ խոշոր ֆինանսական հատկացումներ համաշխարհային հանրությանը ապացուցելու համար այն «ձշմարտությունը», որ 19-րդ դարի 70-ական թթ. Ղարաբաղում հայտնված հայերը պատմական իրավունք չունեն Լեռնային Ղարա-

¹ Տե՛ս Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ, Ե., 2004, էջ 544:

² Տե՛ս Хуршудян Л.А., Истина – единственный критерий исторической науки, Ер. 1989, с. 4:

³ Նույն տեղում:

⁴ Տե՛ս Վալը Թոմաս դե, Սև այգի: Հայաստանն ու Ադրբեջանը խաղաղության և պատերազմի միջով, Ե., 2014, էջ 223:

⁵ Նույն տեղում, էջ 227:

բաղի տարածքների նկատմամբ¹: Ակնհայտ է, որ պետական բարձր մակարդակով հովանավորվում է պատմության կեղծարարությունը, ինչի տարածմանն ու արմատավորմանը հասարակության լայն շրջանակներում նպաստում են զանգվածային լրատվամիջոցները և հեռուստատեսությունը: Իհարկե, սա առաջին հերթին վնասում է եվրոպական կառույցների կողմից առաջ քաշվող հաշտության եզրեր գտնելու սկզբունքներին կամ, այսպես կոչված, ժողովրդական դիվանագիտությանը:

Արդեն նշել ենք, որ 1997 թ. ԵԽ-ը մեկնարկեց Եվրոպայի պատմության դասավանդումն ու ուսումնասիրումը 20-րդ դարում նախածեռնությունը, որի շրջանակներում տեղի ունեցան բազմաթիվ հանդիպումներ, քննարկումներ: Պետք է նշել, որ այս նախածեռնության առանցքային գաղափարներից մեկը պատմության շարադրման և դասավանդման բազմատեսանկյուն մոտեցումն էր: Ըստ այս տեսության ջատագովների՝ նախկինում պատմական շարադրանքը հիմնականում, «իսկ հետո...» բառերով սկսվող արտահայտությունների հաջորդականություն էր: Բազմատեսանկյուն մոտեցումն իր հետ բերելու էր նոր տարր՝ «իսկ այդ ժամանակ...», ինչը հնարավորություն էր ընձեռում ներկայացնել միևնույն իրադարձության հակառակ տեսակետը, հասարակության «անտեսանելի» խմբերի՝ լեզվական, կրոնական, էթնիկ, մոտեցումները²:

Բազմատեսանկյուն մոտեցումը պետք է հնարավորություն ընձեռեր պատմական իրադարձությունները, անձանց, զարգացումները, մշակույթները դիտարկել և ուսումնասիրել այնպիսի մեթոդներով և սկզբունքներով, որոնցով առաջնորդվում է պատմաբանը՝ համադրելով, վերլուծելով սկզբնաղբյուրները: Այս մեթոդի կիրառումը կարող էր նպաստել հակասությունների մեղմացմանը, քանի որ հայտնի է, թե հակամարտությունների ընթացքում ինչ դեր են խաղում հասարակական կյանքում ձևավորված առասպելները³:

Այս համատեքստում 1997 թ. ԵԽ-ի Գլխավոր քարտուղարի նախածեռնությամբ Թբիլիսիում տեղի ունեցավ Հայաստանի, Ռուսաստանի, Կրաստանի և Ադրբեջանի կրթության նախարարության ներկայացուցիչների հանդիպում: Հիմնադրվեց թբիլիսյան նախածեռնությունը, որի նպատակը Կովկասի պատմության ձեռնարկ ստեղծելն էր: ԵԽ-ի գլխավոր քարտուղարը այդ նախածեռնությանը հատուկ քաղաքական նշանակություն էր տալիս՝ համարելով, որ այն կաջակցի Կովկասում հակամարտությունների կարգավորմանը: Այս նախածեռնությանը միանալու ցանկություն հայտնեց նաև Թուրքիան: Հակամարտող երկրների կամ պատմության ընթացքում անլուծելի խնդիրներ ունեցած երկրների միջև համատեղ դասագիրք ստեղծելու փորձառությունը նախկինում արդեն եղել էր: 2013 թ. մարտին Երևանում Ֆրանսիայի և Գերմանիայի միջև Ելիսեյան համաձայնագրի 50-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում ԵՊՀ-ում տեղի ունեցած «Կերտել ընդհանուր պատմություն. ֆրանս-գերմանական պատմության դասագիրքը» սեմինարի ընթացքում բազմիցս նշվում էր երեք հատորով լույս տեսած ֆրանս-գերմանական պատմության դասագրքի մասին, որը կարևոր նշանակություն ունեցավ այս երկրների ժողովուրդների միջև երկխոսության հաստատման գործում⁴:

Կովկասի պատմության դասագրքի ստեղծումը շատ ավելի բարդ ու գրեթե անիրագործելի խնդիր էր՝ հաշվի առնելով ադրբեջանական պատմագրության մեծածավալ կեղծիքներն ու խեղաթյուրումները: Ադրբեջանական կողմը Ադրբեջանի պատմությունը ներկայացնելիս սեփականաշնորհում էր հայկական և պարսկական արժեքները, պարսիկ միջնադարյան հեղինակներ Նիզամիին, Հաթամիին ներկայացվում էին ադրբեջանցի, սեփականացնում էին պարսկական տարածքներ: Դասագրքում անորոշ տեքստ էր առաջարկվում 1915 թ. հայոց ցեղասպանությունը ներկայացնելու համար: 2002 թ. Լոնդոնում կայացած խորհրդակցության ժամանակ հայկական կողմը ներկայացրել էր, որ 1915 թ. Հայոց ցեղասպանությունը թուրքական կառավարության կող-

¹Տե՛ս Հովհաննիսյան Վ., Դարբինյան Ա., Մանոյան Կ., Ավրոյան Հ., Ընդդեմ Ադրբեջանի հայատյաց քաղաքականության, Ե., 2007, էջ 5:

² Տե՛ս Ստրադլինգ Ռ., Պատմության դասավանդման բազմատեսանկյուն մոտեցումը, ուսուցչի ձեռնարկ, էջ 23:

³ Նույն տեղում, էջ 24:

⁴Տե՛ս Անրի Ռենո. «Պատմության ընթացքը երբեմն կարելի է շրջել», <http://www.aravot.am/2013/03/11/213090/>:

մից իր պատմական հայրենիքում հայությանը բնաջնջելու ծրագրված քաղաքականություն էր: ԵՄ-ը իր կողմից առաջարկել էր փոխզիջումային տարբերակ. ցեղասպանությունը գրել չակերտներում, տողատակում ավելացնել բացատրություն, որ կան երկրներ, որ այն ճանաչել են իբրև ցեղասպանություն: Սակայն հայկական կողմը չէր համաձայնվել՝ անդելով, որ նշվեն 1,5 մլն զոհերի թիվը և բոլոր այն երկրները, որոնք ճանաչել են հայոց ցեղասպանությունը, ցեղասպանություն բառն էլ գրել առանց չակերտների¹:

Հետագայում Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի, Ադրբեջանի պատմաբանների հասարակական միության, Վրաստանի Կարիտասի մասնակցությամբ տեղի ունեցավ աշխատանքային հանդիպում, որի ժամանակ որոշվեց հրատարակել Հարավային Կովկասի երկրների պատմությանը նվիրված աշխատություն՝ հիմնված բազմատեսանկյուն սկզբունքի վրա, և ներկայացնել երեք տարբեր մոտեցումներ: Սակայն, պետք է նշել, որ ադրբեջանական կողմի մոտեցումները կրկնվեցին. նույն կեղծաղվանագիտական սկզբունքները, հայերի վերաբերյալ ռասիստական, հակագիտական մոտեցումները, հայկական մշակութային արժեքների յուրացումը:

Ադրբեջանական հետազոտողները առաջնորդվում են երկու սկզբունքով՝ խեղաթյուրել, հակագիտական մեթոդներով ստուգաբանել և սեփականացնել կամ վանդալիզմի ամենադատապարտելի մեթոդներով ոչնչացնել հայկական մշակույթի կոթողները: Ընդ որում դա տեղի է ունենում անթաքույց վստահ լինելով, որ այդ արարքները մնալու են անհետևանք և անպատիժ: Հայտնի են ադրբեջանական գիտնականների Արցախի վիճագրությունների վերաբերյալ տեսակետները, որոնք վերջիններս փորձում են նաև հիմնավորել՝ չխուսափելով շահարկել նաև մեծանուն գիտնականների գործերը, ինպես դա անում էր նախկինում ինժեներ, այժմ քաղաքագետ Ֆ. Ախունդովը լիովին խեղաթյուրելով, սխալ համատեքստում ներկայացնելով հայազգի նշանավոր գիտնական Հովսեփ Օրբելու էպիգրաֆիկ աշխատությունը²: Ինչ վերաբերում է մշակութային կոթողների ոչնչացմանը, ապա դրանց վերաբերյալ փաստերն ամենուր են, որոնցից մեկը լայն արձագանք ստացած Ջուլայի խաչքարերի ոչնչացումն էր: Հետաքրքիր է, պրոֆեսոր Բ. Հարությունյանի այն միտքը, որ ադրբեջանցի գիտնականները նույն եռանդով դուրս կգային նաև իրական աղվանների դեմ, եթե նրանք հրաշքով հայտնվեին նորից³:

ԵՄ-ի մեկ այլ նախաձեռնություն՝ «Ուրիշի կերպարը պատմության դասավանդման համատեքստում», ուներ հետևյալ բաղադրիչները.

- Բազմամշակութային հասարակության մեջ բազմաթիվ կերպարներ, փոխկապակցված ձակատագրեր,
- Յուրայինների և օտարների կերպարը գլոբալացման համատեքստում,
- Ուրիշի կերպարը հակամարտ իրավիճակներում:

Պետք է նշել, որ այս նախաձեռնության բոլոր բաղադրիչները բացահայտ արհամարհվում են ԵՄ-ի անդամ հանդիսացող Ադրբեջանում: Շուրջ 100 տարի ադրբեջանական քարոզչությունը փորձում է ի դեմս հայերի ձևավորել անհաշտ թշնամու կերպար: 1905-06 թ. Բաքվի և Ելիզավետպոլի հայերի կոտորածների տպավորության տակ ադրբեջանցի կին գրող Ում-էլ-Բանինը «Կովկասյան օրեր» գրքում հիշում էր. «Տոնական օրերին մենք խաղում էինք հայերի սպանդ, խաղ, որը գերադասում էինք բոլոր մյուսներից: Մեր ռասիստական կրքերով արբեցած՝ մենք զոհաբերում էինք մոր կողմից հայուհի Թամարին մեր ատավիստական ատելության զոհասեղանի վրա: Սկզբում մենք քմահաճորեն նրան մեղադրում էինք մուսուլմանի սպանության մեջ և

¹ Տե՛ս Համատեղ դասագիրքը՝ վտանգի տակ, <http://www.aravot.am/2005/07/20/321328/>

² Տե՛ս Шахназарян А., Очередной “шедевр” азербайджанской пропагандисткой машины, http://www.armin.am/images/menus/2500/Artashes_Shahnazaryan.pdf

³ Տե՛ս Арутюнян Б.А., Когда отсутствует научная добросовестность, К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении, Ер., 1991, с. 382:

անմիջապես գնդակահարում, մի քանի անգամ իրար հետևից, որպեսզի վերաթարմացնենք հաճույքը»¹:

Ուս գեներալ Ա. Լեբեդն իր հուշերում նկարագրում է, թե ինչպես Բաքվում 1988 թ. դեկտեմբերի 7-ին ամբողջ մի բարձրահարկ բազմաբնակարան շենք ցնծում և ուրախության խրախճանքի մեջ էր հայտնվել՝ լսելով Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժի մասին լուրը²: Ղատելով ադրբեջանական պետական, քաղաքական իշխանությունների, հասարակական, մշակույթի գործիչների ռազմատենչ քարոզչությունից, գործողություններից՝ նրանց նպատակը մշտապես այսպիսի հակահայկական բարբարոսական տրամադրությունների սերմանումը և պահպանումն է հասարակության մեջ: Թերևս, դրա մասին են վկայում Ադրբեջանի պատմության դասագրքերում տեղ գտած մեկնաբանությունները, ընդգծված բացասական վերաբերմունքը հարևանների՝ հայերի, վրացիների, ռուսների, երբեմն՝ պարսիկների, և ոչ հարևանների նկատմամբ՝ Բյուզանդիայի, Արևմտյան Եվրոպայի երկրների, ինչպես նաև այլ կրոնների ներկայացուցիչների, մասնավորապես քրիստոնյաների նկատմամբ³: Սխալ չի լինի նշել, որ օտարի՝ թշնամու կերպարի ձևավորման դրսևորումներից է նաև Ադրբեջանում «սև ցուցակի» առկայությունը:

Ադրբեջանում թշնամանքի և անհանդուրժողականության մթնոլորտում մեծացող մի քանի սերունդների համար օրինակ են ծառայում զազրելի ոճրագործություններ գործած զինվորականները, որոնք պարզևատրվում և մեծարվում են նախագահի կողմից: Հետևաբար չափազանց կարևոր է, որ եվրոպական կառույցները արձանագրեն, արձագանքեն և դատապարտեն այս իրողությունները, ինչն անհրաժեշտ է այնքան շատ բարձրաձայնվող եվրոպական արժեքների հուսալիությունը և կենսունակությունը հիմնավորելու համար:

Аршалуйс Тетейн, Инициативы Совета Европы в области преподавания истории и фальсификации азербайджанской историографии,- Проблемы преподавания истории занимают важное место в деятельности Совета Европы (СЕ). Разные документы посвященные проблемам преподавания истории были приняты и многие программы и инициативы были организованы в рамках СЕ. Но несмотря на это, в Азербайджане, которая является государством-членом СЕ, на государственном уровне поощряются фальсификации в области историографии и в процессе преподавания истории, тем самым препятствуя мирным инициативам в регионе.

Arshaluis Teteyan, History teaching initiatives of Council of Europe and the falsifications of Azerbaijan's historiography,- History Teaching problems occupy a significant place within the activities of Council of Europe. Different documents devoted to the problems of history teaching were adopted and many programs and initiatives were organized within the CE. Despite to this, in the member state of CE Azerbaijan falsifications in historiography and in the process of history teaching are encouraged at the state level preventing the peace initiatives in the region.

¹Հովհաննիսյան Վ., Ղարբինյան Ա., Մանդյան Վ., Ալվրցյան Հ., նշվ. աշխ., էջ 8:

²Տե՛ս Լեբեդ Բ., *За державу обидно*, М., 1995, с. 271:

³Տե՛ս Բамишвили П., Лордкипанидзе Б., «Образ врага» в школьных учебниках истории Азербайджана, *Перекрестный анализ школьных учебников стран Южного Кавказа*, Ер., 2012, с. 128: